ՌՈՄԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ, փիլիսոփայության գիտությունների թեկնածու

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԿԱՐԳԸ

ՀՏԴ 341:340

Հոդվածում հերմենևտիկական մեթոդաբանությամբ՝ մեկնա–փիլիսոփայական խորհրդածության ուղիով բացորոշվում է պատմության հիմնարար խնդրակարգը Մովսես Խորենացու պատմափիլիսոփայական հայեցակարգում: Սկզբունքորեն և էութենականորեն հասկանալ պատմությունը, կնշանակի՝ հասկանալ պատմական տեքստում «ասվածի» իսկությունը հայտող իմաստը և այդ իմաստում՝ հենց իմաստության խորհուրդը: Հոդվածում մեկնողաբար բացորոշված է պատմության հիմնարար խնդրակարգը Մովսես Խորենացու երկում՝ «հասկանալ և մեկնողաբար բացորոշել պատմության՝ որպես այդպիսին գոյության իսկությունը հայտող իմաստը, որում և՝ իմաստության խորհուրդը»: Այդ համընդգրկուն ու ամբողջական խնդրակարգը բաղկացած է երկու միահյուս բաղադրատարրերից՝ հասկանալ և մեկնողաբար բացորոշել, նախ և առաջ, ընդհանրապես՝ պատմագիտության հայեցակարգը և ապա՝ ըստ այդ հայեցակարգի՝ պատմողաբար «ասվածում», այն է՝ ընդհանրապես՝ պատմության և կոնկրետորեն՝ հայոց պատմության իսկությունում բովանդակյալ իմաստության խորհուրդը:

Հանգուցային հասկացություններ՝ պատմության գոյություն, ինքնություն, եղելում, պատմության առարկա և պատմության կատարում, պատմության կոչում, պատմության դիտավորություն, իսկություն, իսկական և անիսկական գոյություն, իսկության բացորոշում, իսկություն հայտող իմաստ, իմաստության խորհուրդ:

> *«Ճշմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն, շարժմանցն խորհրդոց, յիշատակացն զգացեալ զլոյսն գիտութեան եւ զիմաստութեան շնորհաց Հոգւոյն Սրբոյ»:*
>
> Ս. Գրիգոր Լուսավորիչ «Յաճախապատում»

> *«Խորենացւոյն ջանքն էր ճշմարիտ պատմութիւն գրել, վասնզի բուն պատմության հոգին ալ ճշմարտութիւնն է»:*
>
> Ղևոնդ Ալիշան [1: 142]

> *«Պատմության մարմինը մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի եղելումի պատումն ու գիրն է, իսկ պատմության հոգին՝ իմաստությունը»:*
>
> Ռ. Ք.

1. Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը հետազոտվել է զանազան առումներով: Բանասիրական, պատմագիտական, աղբյուրագիտական բնույթի հետազոտություններում առավելաչափ քննության են առնվել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատությունում պատմվող փաստական նյութին առնչվող խնդիրները և որպես այդպիսին՝ պատմական աղբյուրներն ու հնարավոր ազդեցությունները, միջլեզվային փոխառնչությունները՝ բառա– և–կամ լեզվա–կառուցվածքային, այդկերպ ու այդչափ նաև իմաստային փոխներթափանցումները, պատմագիտական հայեցակարգի ժամանակագրական համակարգը,

պատմության բովանդակությունը հայտնաբերելու «տեխնիկան», և, այնուամենայնիվ, ոչ ամեն «իսկը» այն էականի, որ կարող է վերաբերել «պատմության էվրիստիկային», այսինքն՝ ըստ Գ. Շպետի՝ «պատմական ճշմարտությանը տանող ուղիներին» [25: 292]: Իսկ ուսումնասիրել երկում պատմվող զուտ փաստական նյութը, կնշանակի՝ ուսումնասիրել սոսկ «պատմության մարմինը»: Կարելի է նույնիսկ ամրագրել, որ մասնագիտական գրականությունում առավելաչափ հետազոտվել են **«պատմության մարմնի»** բաղադրատարրերը:

Աշխարհի, որում և՝ կյանքի, իրադարձությունների ու գործերի՝ «նյութեղեն–իմաստային» կամ «մարմնեղեն–ոգեղեն» միացյալ–ամբողջական բնության գոյությունը որպես այդպիսին նույնորոշվել (իդենտիֆիկացվել) է նրա առավելապես նյութեղեն և–կամ մարմնեղեն բաղադրատարրի հետ, և իրադարձության իսկությունը պատմելը հանգեցվել է նրա միացյալ (երկմիասնական) կազմության սոսկ նյութեղեն և–կամ մարմնեղեն բաղադրատարրին «նույնացող», իսկ ավելի ճշգրիտ՝ նյութեղեն բաղադրատարրը մտառող, իմաստի պատմումին: Թերևս ոչ միշտ, բայց և առավելապես, «եղելությունների իսկություն» ասելով, որպես այդպիսին գիտակցորեն հասկացվում էր հիմնականում ուղղակի ու բառացի և–կամ այլաբանական այն իմաստը, որում մտառված է եղելության արտաքին փաստական կերպը: Եվ այդ կնշանակի, որ իրադարձության ու գործի որպես այդպիսին գոյության կամ եղելության արտաքին փաստական կերպի հետ ուղղակի իմաստի նույնական լինելու բնույթից գայթակղվելով և հասկացման ձգտող մտքի որոնումի մեջ, կարծես, այլևս մտովի «կուրանալով», մոռացվում էր, որ կոնկրետ մեր դեպքում՝ պատմական տեքստում և, ըստ Պ. Ռիկյորի «տեքստի ֆենոմենոլոգիական հերմենևտիկայի» հայեցակարգի, **ընդհանրապես՝ տեքստում արձանագրվում են ոչ թե դեպքերը, այլ՝ դեպքերի նշանակությունները և–կամ իմաստները**: Քանզի այն, ինչ ձգտում ենք հասկանալ, ոչ թե իր բնույթով անցողիկ իրադարձությունը կամ պատահարն է որպես այդպիսին, «այլ՝ նշանակությունը, որը մնայուն է [26: 134]£ Հասկացվում և որպես տեքստ գրի են առնվում ոչ թե իրադարձությունները՝ անցողիկ իրենց բնությամբ, այլ՝ դրանց նշանակությունները և–կամ իմաստները [26: 199]:

Կարելի է ասել, որ այդպիսի մոռացությամբ՝ պատմագիտությունն ու բանասիրությունը իրենց կոչումից ու իսկությունից այլակերպվելով, առավել հաճախ ներկայանում են իրենց **անիսկական գոյությամբ**, որի պատճառով և՛ պատմությունն ընդհուպ մինչև այժմ առավելապես հասկացվում է որպես **«դեպքերի պատմություն»**, և՛ բանասիրությունը՝ որպես **«լեզվագործունեության իրողությունների կամ փաստերի բանասիրություն»**: Պատմությունն ու բանասիրությունն, անշուշտ, ոչ իրենց պոտենցիայով, այլ՝ իրենց այդկերպ ակտուալացման պարագայում, այսինքն՝ իրենց իսկությունից ունայնացյալ և ուրեմն՝ անիսկական գոյությունում, չեն ներկայանում ու հասկացվում որպես **այդ ամենի** (պատմության դեպքում՝ ինքնին իրադարձությունների ու գործերի, իսկ բանասիրության դեպքում՝ ինքնին լեզվական իրողությունների) **բուն իմաստի բացահայտմանը, ըստ մարդկային կարողության, ձգտող, որոնող ու հասու գիտություններ**: Առավել ճշգրտելով ու բացորոշելով՝ կարելի է ասել, որ պատմությունն ու բանասիրությունն իրենց անիսկական գոյությամբ ակտուալացման պարագայում չեն ներկայանում որ-

պես **այդ ամենում և–կամ ամենով պահյալ ու հաղորդյալ, բազմաբովանդակ ու մեկ–միասնական իսկություն հայտող իմաստների, իսկ դրանցում՝ հենց իմաստության, ըստ մարդկային կարողության, ձգտող, որոնող ու հասու գիտություններ**:

2. Կարելի է և հենց հարկ է նկատել, որ բանասիրական (որում և՝ քերականական, լեկսիկական,…), պատմական և աղբյուրագիտական հետազոտությունները, որոնցում քննության են առնվել ու առավելաչափ հետազոտվել Մովսես Խորենացու երկում պատմվող փաստական նյութի, «պատմության մարմնի» բաղադրատարրերը, զուտ միջոց և սոսկ **նախապատրաստություններ են** տեքստում և–կամ տեքստով **ասման բերված իմաստի** ու հենց իմաստության հասկացման ու մեկնության հիմնային ու առանցքային դիտավորությունը կատարումի բերելու համար: Բովանդակ **մշակույթը**, որում և՝ տեքստայինը, **իմաստա–նյութեղեն կամ հոգե–մարմնավոր գոյությունում կերպացյալ իմաստ է**: Եվ այստեղ զուտ նյութեղենին, մարմնականին ու փաստական բաղադրիչին առնչվողի որոնման, ատրիբուցիայի ու հաստատագրման նկատմամբ հնագիտական, արվեստաբանական, լեզվամշակութային կամ բանասիրական (լեզվաբանական, լեկսիկական, ոճական…), աղբյուրագիտական և պատմագիտական հետազոտությունները, ըստ էության, **նախապատրաստություններ են** մշակույթում **կերպացյալ իմաստի** հասկացման ու մեկնության, որով և՝ մարդկային ինքնությունն ու կյանքը հնարավորություն է ունենում իմաստությամբ ներկրթության և հոգեկեցույց ու կենարար իր գոյության: Բոլոր այդ բնույթի հետազոտությունները չեն կարող լինել ինքնանպատակ, և իրենց գոյության իմաստն ու արժեքն ունենալ հենց միայն իրենցում: Ամփոփելով ասվածը, կարող ենք ամրագրել, որ դրանք չլինելով ամենևին ինքնանպատակ և իրենց որպես թե ուրույն գոյությամբ՝ արդեն իսկ ինքնին արժեք, մշակույթում կերպացյալ իմաստի ու իմաստության հասկացմանն ու մեկնաբանությանը **նախորդող ու նախապատրաստող պրոցեդուրաներ են և հենց այդ նախապատրաստության համար իսկ առաջացել ու իրենց կատարումն ունեն**:

3. **Ամենայն պատմություն լեզվամշակութային իրողություն է, կարելի է նաև ասել՝ բանավոր ու գրավոր տեքստամշակութային ավանդություն**: Իսկ լեզվամշակութային ամենայն արտահայտությանը, բանավոր կամ գրավոր տեքստամշակութային ավանդությանը ուղղված **սկզբունքային՝ առաջնային ու վերջնային հարցադրումը**, որով հիմնացյալ ու պայմանավորված՝ առաջանում են այլ ևս հարցեր, հետևյալն է՝ **ի՞նչ է բուն ասվածը**: Սկզբունքային այդ հարցադրման մեկ այլ՝ առավել խոր ու ճշգրիտ բանաձև է հետևյալը՝ ի՞նչ իսկություն է, կամ՝ ի՞նչ իսկություններ են մարդկային ինքնության հասկացման սիրուն, ջանքին ու խորքին մատչելի դառնում տեքստամշակութային ավանդությամբ ասվածում և–կամ ասվածով: Տվյալ **տեքստում** և–կամ **տեքստով բուն ասվածում**, ինչպես նաև **ասման կերպում** և–կամ **ասման հենց այդ կերպով** իսկություն հայտող ի՞նչ հնարավոր իմաստ, որում հենց իմաստություն է ներկայանում ու բացահայտելի դառնում մարդկային հասկացման ու մեկնաբանության կարողությանը: Կոնկրետ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի նկատմամբ իր կիրառությամբ՝ վերոասացյալը կնշանակի, որ պատմական այս երկի առնչությամբ սկզբունքային, հարկ է նաև ասել՝ առաջնային ու վերջնային, խնդիրը հետևյալն է. իր յուրովի պատ-

մական աղբյուրներով ու հնարավոր ազդեցություններով, բառա– և–կամ լեզվա–կառուցվածքային բնույթի միջլեզվային փոխառնչություններով, իմաստային փոխներթափանցումներով, ժամանակագրական համակարգով, պատմության բովանդակությունը հայտնաբերելու «տեխնիկայով» և ամբողջական պատմագիտական հայեցակարգով հանդերձ, երկում և–կամ երկով բուն **ասվածում** իսկություն հայտող ի՞նչ հնարավոր իմաստ, որում՝ հենց իմաստություն է ներկայանում մարդկային հասկացման ու մեկնաբանության կարողությանը:

4. **Բանավոր կամ գրավոր լեզվա– և հենց տեքստամշակութային իրողությունների առնչությամբ սկզբունքային՝ առաջնա– ու վերջնանպատակային, խնդիրը բուն ասվածի, իսկ ասվածում՝ հենց իմաստության հասկացումն** է: Ասվածն ուղղակիորեն վերաբերում է ամենայն գրական՝ գիտական կամ գեղարվեստական ստեղծագործության: Մարդկային ինքնությանն ու կյանքին հոգեկեցույց ու կենարար բովանդակ մշակույթի և հենց տեքստային մշակույթի գործերը ստեղծվել են՝ սկզբունքորեն իսկ **կոչված ու հղված** լինելով ժամանակակիցների ու սերունդների հասկացման ու իմաստացման սիրուն ու ջանքին: Միջնադարյան հայ գրական ավանդության և այդ թվում՝ պատմական երկերի ու կոնկրետ հենց Մովսես Խորենացու պատմական երկի նկատմամբ ևս վերոասացյալը նույնորեն կնշանակի, որ սկզբունքային խնդիրը տեքստում **բուն ասվածի, իսկ ասվածում՝ հենց իմաստության հասկացումն է**:

Ասվածում իսկություն հայտող իմաստի և այդ իմաստում՝ հենց իմաստության խորհրդի բացահայտման նպատակային հիմնախնդրի լուծմանը հասանելու համար, որպես միջոց, ենթակարգվածություն ու նախապատրաստություն, որպես իսկ մասնավոր ու միջանկյալ խնդիրներ ու հարցադրումներ, առաջանում են բանասիրական, պատմագիտական, աղբյուրագիտական և այլ հետազոտությունների թեմատիկ խնդրակարգերը, որոնց նախկին ու նաև այժմյան իրագործումներին ենք առնչվում այդ գիտությունների ներկայում: Եվ բանասիրական, պատմական ու աղբյուրագիտական բնույթի բոլոր այդ հետազոտություններն իրենց կոչմանը համապատասխան են դառնում և իրենց ճշմարիտ իմաստն են ձեռք բերում, այսինքն՝ իրենցում ներկա ունենալով իրենց իսկությունը՝ ունայնության չեն մատնվում, եթե բոլոր իրենց ձեռքբերումներով ու հենց նախապատրաստություններով **շարժ**, իսկ արդեն անինքնական շեղվածության ու այլակերպվածության պարագայում՝ **դարձ է** կատարվում առաջնային ու հիմնարար խնդրին՝ տեքստում և–կամ տեքստով ասվածի հասկացման, մեկնաբանության ու իմաստացման դիտավորությանն ու կատարումին: Այդկերպ ամենայն այդ նախապատրաստությունները որպես իրենց նպատակային կատարումի բերող «պսակ» և իրենց գոյությունն իմաստավորող են ունենում հասկացման ու մեկնաբանության կատարումը: Էական է նաև նկատել, որ տեքստի իմաստային բնույթի ու հենց իմաստասիրական քննությունը, տեքստում ասման բերվող իսկության ամբողջական ու մեկ–միասնական իմաստի՝ հասկացմամբ ու մեկնաբանությամբ բացահայտումը, ի ճշգրտում և ի լրումն զուտ աղբյուրագիտական, բանասիրական, լեզվաբանական, պատմական ուսումնասիրությունների և ըստ այդմ՝ եզրակացությունների, նոր հնարավորություններ ու տեսադաշտ կարող է ապահովել, մասնավորապես, եկեղեցական ավանդությամբ Մովսես Խորենացուն վերագրված տեքստերի միջև փոխառն-

չությունների բացահայտման, ինչպես նաև «պատմային ինքնության», գրման ժամանակաշրջանի ատրիբուցիայի խնդիրներում կողմնորոշվելու համար:

Կարելի է հասկանալ և նույնիսկ ավելին՝ անհրաժեշտություն ու նաև նախընտրելի պիտոյականություն է հասկանալ, որ բանասիրությունը, պատմագիտական և պատմափիլիսոփայական հետազոտությունները **կոչում ու իսկություն ունեն և իրենց իսկությունն իրենցում ունեցող գոյությամբ, որ և կնշանակի՝ իրենց իսկական գոյությամբ, կարող են ներկայել** միմիայն այն պարագայում, եթե իրենց ուսումնասիրությանն ու հասկացմանը ենթակա «բան»–ի ընտրությունում իրենց համար **հիմնարար ու հեռանպատակային խնդիր** ճանաչեն և իրենց ինքնահասկացումն ու ուղղորդվածությունը կայացնեն դեպի պատմատեքստային մշակույթի **երկմիասնական բնության**՝ իմաստային–նյութեղեն, («ոգեղեն–նյութեղեն» կամ «հոգե–մարմնավոր») գոյության **բուն դիտավորության, ըստ այդմ՝ կերպարանումի ու կատարումի <u>իսկության ու իմաստության խորհուրդի</u> բացահայտումը**:

Բանասիրական և պատմական գիտություններն ու հետազոտություններն իրենց այդկերպ **ինքնահասկացման** պարագայում հնարավորություն են ունենում ներկայանալ իրենց **իսկական գոյությանը, այլ ոչ՝ իրենց գոյության անիսկությամբ**, միմիայն այնժամ ու այնչափ, որժամ ու որչափ իրենց խնդրակարգերը կհասկանան ու կորոշարկեն՝ ենթակարգված «իմաստության հասկացման» սկզբունքային հարցադրությանը, այլ կերպ ասած՝ **բուն ասվածի և այդ ասվածում հենց իսկություն հայտող իմաստի, իսկ այդ իմաստում՝ իմաստության խորհրդի հասկացման խնդրին**: Այդ գիտություններն ու հետազոտություններն իրենց կոչմանը համապատասխան գոյությամբ կարող են լինել, եթե **որպես մերձավոր խնդիր ու կատարում ճանաչելով ու իրագործելով «պատմության մարմնի» իսկության բացահայտումը**, պատմության իսկության՝ մարդկային իմացական կարողությանը հասանելի լրիվությունն ու կատարելությունն այլևս սկզբունքորեն չեն շրջանակի ու սահմանափակի այդկերպ ու այդչափ բացորոշելիությամբ:

Գիտությունների համար էական հատկություն է և դրանք որպես իսկ *իմաստության գիտություն և–կամ հետազոտություն* էացնող է՝ լինել ոչ միայն **հետազոտական** կողմորոշվածությամբ, այլև սկզբունքորեն **ուսումնասիրող** ուղղորդվածությամբ: Ինչպե՞ս հասկանալ ասվածը: Իսկության իրենց որոնումներում գիտություններին ու հետազոտություններին հարկ է որպես «իսկություն» հասկանալ ու բացահայտման ենթակա դիտարկել ոչ թե սոսկ փաստը, այսինքն՝ որպես փաստ նույնորոշելի [իդենտիֆիկացնելի] իրողությունը, աստ կոնկրետ՝ պատմական «հետքը», որ և իրագործում է «հետազոտությունը» որպես այդպիսին: Հարկ է ուղղորդված լինել, դիտավորություն ու կատարում ունենալ՝ որպես «իսկություն» բացահայտել ոչ թե սոսկ փաստը, այլև **խորհրդածության** ենթակա դիտարկելով այն, հասկանալ՝ **առ ի ուսումն ու ներկրթություն** հենց իմաստը և դրանում՝ հնարավոր իմաստության խորհուրդը, որ և «պահյալ է» ասվածում ու «ի հայտ դառնալու» հնարավորության է մատչում հասկացման ձգտող մարդկային հոգու և մտքի բանականությանը: **Ուսումնասեր** հոգին ու միտքը, գիտությունն ու հետազոտությունն են, որ իսկություն ու հենց իմաստություն որոնող իրենց դիտավորությամբ, ունակ և ուղղորդված են ոչ միայն սոսկ հետազոտության, այլև **խորհրդածության**՝ իմաս-

տության խորհուրդի հասկացման ու մեկնողաբար բացորոշման, որով և՝ որպես իրենց կերպարանում ու կատարում՝ դառնում են **ուսումնառու** հենց իմաստության, կայանալով ու կատարելագործվելով որպես իմաստասեր հոգի ու միտք և հենց **իմաստության գիտություն և–կամ հետազոտություն**:

Բանասիրական ու պատմական գիտություններն ու հետազոտություններն իրենցում իրենց իսկությունն ունեցող գոյությամբ, որ և կնշանակի՝ իրենց իսկական գոյությամբ, կարող են ներկայել՝ իսկության իրենց որոնումը, հասկացումն ու մեկնաբանությունն այլևս սկզբունքորեն չշրջանակելով ու չսահմանափակելով սոսկ փաստականի՝ **պատմության «մարմնի»** հետազոտությամբ, այլև **պատմության «հոգու»** ուսումնասիրությամբ: Բոլոր այդ գիտությունները իսկության ու իմաստության ուսումնասիրության ուղղորդվածություն ունեցող իրենց դիտավորությամբ և ըստ այդմ՝ կերպարանմամբ ու կատարումով՝ կարող են մատչել մարդկային իմացական կարողությանը հասանելի լրիվությանն ու կատարելությանը, **պատմության իսկությունը** ճանաչելով որպես **բազմաբովանդակ ու մեկ–միասնական** և պատմության «մարմնի» իրենց **մերձավոր խնդիրն ու կատարումը**՝ դեռ միայն նախապատրաստական, իսկ գիտական մտքի ուսումնասիրության, իմաստախույզ քննության, խորհրդածության ու հասկացման **հեռավոր խնդիր ու կատարում ճանաչելով պատմության «հոգու», այն է՝ ուսումնասիրվող երկի բովանդակ՝ ուղղաբանող և–կամ այլաբանող նշանակությամբ, ըստ մարդկային կարողության, բացահայտելի հոգևոր իսկությունն ու իմաստության խորհուրդը:**

5. Կարելի է նկատել, որ վերոնշյալ բնույթի հետազոտությունները պատմական տեքստը հիմնականում դիտում են որպես **անուն** կյանքի եղելության **փաստերի**, և տեքստը ընթերցում ու վերլուծում **անվանում–փաստ** կառուցվածքով: Կյանքի նախկին ու երբեմն նաև հեղինակի ներկայում շարունակական նշանակալի եղելումի վերաբերյալ պատմողաբար ասվածը հարկ է դիտարկել ոչ սոսկ որպես այդ եղելումի **անուն**, ուստի և այդ ասվածով՝ որպես իսկություն բացահայտելի տեսնել միայն եղելումի փաստականությունը, այդպիսով, «պատմություն» գիտությունը կողմնորոշելով զուտ իր **մերձավոր խնդրի**, այն է՝ **պատմության «մարմնի»** հետազոտությանը: Սկզբունքորեն անհրաժեշտ ու նախընտրելիորեն պիտոյական է՝ ասվածում որոնել, հասկանալ ու մեկնողաբար բացորոշել նաև տվյալ եղելումի **իմաստը** և դրանում, որպես հիմնորոշ ու նպատակային **հեռավոր խնդիր**, հենց հնարավոր իմաստության խորհուրդը: **Գրավոր և–կամ բանավոր լեզվով ասված իմաստի և դրանում՝ հենց իմաստության հասկացման խնդիրը հիմնարար է բանասիրական, պատմական ու աղբյուրագիտական բնույթի բոլոր հետազոտությունների ու գիտությունների առաջացման համար: Իսկ իմաստության հասկացման կատարումը նպատակակետ է** և ուրեմն՝ բոլոր այդ բնույթի գիտական հետազոտությունների ջանքն ու արդյունքը, որպես «առ հասկացում» նախապատրաստություն ու միջոց, նպատակային ամբողջի տեսադաշտում իր մասնատեղի ու մասնաչափի և ուրեմն՝ մասնավոր նշանակության մեջ տեսանել ու որոշարկել ընձեռելով, դրանք իմաստավորող ու պսակող նպատակային լրումն է: Քանզի, ըստ Գրիգոր Տղայի և փոքր–ինչ լրացմամբ՝ նաև ըստ Սոկրատի, **եթե որևէ ոք իր անձին ու իր գիտեցմանը վստահանալով ասի, թե՝ այսինչ մասը գիտի (և ուրեմն՝ այդ**

ինչի մասն–ա–գետ է), ապա՝ գիտի՞ նա, արդյոք, թե՝ ինչպես պիտո է այդ մասը գիտենալ՝ ամբողջին անգիտանալով և ամբողջի տեսադաշտում այդ մասն իր չափի ու նշանակության մեջ չտեսանելով ու հասու չդառնալով:

6. Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի նկատմամբ XIX դարի երկրորդ կեսից ի վեր սկզբնավորվել և ապա՝ նաև շարունակություն է ունեցել «գերքննադատ», որ և՝ քննադատամոլ, մոտեցումը: Միմիայն քննադատականության տրված լինելու պարագայում և այդկերպ՝ սոսկ հակառակության ոգով ու մոլությամբ՝ ընթերցողն ու հետազոտողը, որպես հետևանք, մնում է անհաղորդ տեքստից՝ հասկացման ձգտող ամենքին հղված ու նաև մեզ դիմող ավանդությանը: Այսկերպ քննադատականության դեպքում՝ ոչ–ճշմարիտ կանխադատությամբ ու այլևս ոչ ադեկվատ բացությամբ՝ սկզբունքորեն իսկ իրագործվում է իմաստություն չորոնող մոտեցում, և տեքստում և–կամ տեքստով ասման բերվող իսկությունը հնարավորող իմաստին ու իմաստության խորհրդին անհաղորդ **թեր ու նաև թյուր հասկացում**, որի մասին՝ գիտական քննությամբ ու պատճառների բացահայտմամբ, բնորոշող գնահատականներով ու ճշգրտումներով հանդերձ, մասնագիտական գրականության մեջ խոսվել է բազմիցս [9: 5, 43–48][1]:

Ժամանակակից հայ պատմագիտությունը XIX դարում իր սկզբնավորումից ի վեր «պատմության մարմնի» իմացությանը հետամուտ իր **մոտեցումն ու «հետազոտական խնդիրը** մեզ ավանդված տեքստերի նկատմամբ, ընդհուպ մինչև այժմ, ձևակերպել ու սահմանափակել է որպես **նախկինում պատմված բովանդակության ճշգրտում**: Այս խնդիրը սահմանվում և իմաստավոր է ձևակերպվում՝ ըստ այն նպատակի, որին և հետամուտ է ժամանակակից պատմագիտությունը՝ **վերակազմել նախկինում տեղի ունեցածի հանրագումար պատմագրական լինելությունը»** [13: 5], [6: 5] **և այդկերպ բացահայտել աշխարհի ու կյանքի հավաստի՝ իր իսկ ժամանակում եղելությունը**: Ոչ ճշմարիտ կանխադատությամբ մտածվում է, թե իր մոտեցման և սկզբունքային ու բովանդակ հետազոտական խնդրի այսկերպ սահմանումը հայոց պատմության նոր ու նաև ժամանակակից գիտությանը բնորոշ ինքնահասկացում ու առավելություն է, որ և ձևակերպում է հայոց պատմությունը որպես գիտություն իր ժամանակակից կարգավիճակով: Նաև մտածվում է, թե՝ հայոց պատմությունն իր հետազոտական նպատակային խնդրի, նրա ընդգրկման ծավալի ու մոտեցման իմաստների այդկերպ հասկացմամբ ու բացորոշ սահմանմամբ՝ առավել է ներկայանալի դառնում որպես **քննական պատմություն**: Ավելին, ոչ–ճշմարիտ կանխադատությամբ՝ քննականությունը, որպես էմպիրիկ և տեսական պատմագիտության որակական առանձնահատկություն, առավելաչափ բնորոշ ու վերագրելի է դիտվում ժամանակակից պատմագիտությանը և նրա հնարավորություններին: Հայեցակետային հավակնությամբ մտածվում է, թե հայ պատմական միտքն ու իր արդյունք՝ հայոց պատմությունն իր այսկերպ ինք-

[1] «Գերքննադատների» փաստարկների քննարկումն ու սնանկության բացահայտումը տես նաև այդ ատենախոսության հետագա էջերում. նույնը առավել ընդարձակ տես նաև [10: 9–18] և աստ նույնպես «գերքննադատների» փաստարկների բովանդակային քննարկումը, սնանկության բացահայտումն ու Խորենացու երկում ասվածի առավել ադեկվատ ընթերցանությունը, ինչպես նաև հաղորդվող պատմական տեղեկությունների ուղիղ հասկացման ու մեկնաբանության տեսակետի նորովի հիմնավորումը տես գրքի ողջ շարադրանքում: Նույն այս առնչությամբ և նույնպես երկի ողջ բովանդակությունում տես [5], տես նաև [2: 6–7] ու վերջինիս այլ ևս էջերում՝ մեջբերվող և–կամ քննարկվող կոնկրետ տեղիների վերաբերությամբ:

նահասկացմամբ՝ մուտք է գործել մի նոր փուլ և արդեն իրավասու ենք խոսել հայ **պատմագիտության** մասին՝ գիտության ժամանակակից իմաստով:

Հիրավի, **էմպիրիկ պատմության** կոնկրետ հետազոտական պրակտիկայում պատմախույզ որոնման ու «պատմելիքի» ժողովման խնդրում մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի իրողությունների էմպիրիկ տրվածության հնարավորություններն այլ էին միջնադարում և սկզբունքորեն ոչ նույնական այժմյան պատմագիտության հնարավորություններին: Եվ այնուամենայնիվ, ճշմարիտ չի լինի ասել, թե ժամանակակից պատմագիտությունն ըստ ամենայնի ու էական գերազանցություն հավաստող այնպիսի մի առաջընթաց ունի պատմության դիտավորության, «պատմելիքի» ընտրության, պատմելիքի իսկությանն ադեկվատ «պատմումի» ու ընթերցողին ներկայացման բովանդակ խնդրակարգում, որով և՝ պատմությունն առավելապես է հնարավորություն ու կատարում ունենում «ընթերցասէր» [8: 17][1] և «ուսումնասէր» [8: 22][2] ժամանակակիցներին ու սերունդներին բացահայտել հենց այն իմաստը, որ և՝ Մովսես Խորենացու երկում՝ **մարդկային ինքնության, կենսակերպի ու մշակույթի նախկին և երբեմն նաև հեղինակին ժամանակակից ներկայում շարունակական կամ գուցե միայն նշանակալի ու հենց այդկերպ՝ ներկայակից եղելումի իսկություն հայտող <u>իմաստությունն է</u>**:

7. Ժամանակակից հայ պատմագիտությունն այս նույն շրջանից ի վեր՝ իր նպատակի, հետազոտական խնդրի ու մոտեցման մեջ սկզբունքորեն շեշտադրված ունի **«եղելությունների հավաստիության»** խնդիրը, ոչ–բացորոշ կերպով պատմական եղելությունների հավաստիությամբ բացահայտումն անհրաժեշտորեն պայմանավորված ու հասանելի դիտելով **անցյալի իրադարձությունների ու գործերի համայն բոլորումի վերակազմության** համատեքստում: Այդ առումով՝ ժամանակակից հայ պատմագիտության վերաբերմունքն ու անդրադարձը քրիստոնեական միջին դարերի մեր պատմիչներին կարելի է բնորոշել որպես **միջնորդավորված հավաստիության խնդրով ու «հավաստիության» հասկացության բովանդակության յուրովի մեկնաբանությամբ:** Միջին դարերի մեր պատմիչների երկերում պատմվածի նկատմամբ հաստատվում է **հավաստիության** խնդրով և «հավաստիության» իդեայի նորովի, անտիկ հունական ու նաև միջին դարերի քրիստոնեական ըմբռնումներից զանազանվող մեկնաբանություն իրենում հայտող տեսությամբ միջնորդավորված հարաբերություն: Եվ նկատենք, որ ժամանակակից գիտության «հավաստիության» տեսությունն իր ակունքում ունի դեկարտյան ըմբռնումը [15: 198–209; 12: 64–76][3]:

8. Հարկ է, սակայն, հասկանալ ու ամրագրել, որ պատմվող բովանդակության, ուստի և օգտագործվող աղբյուրների նկատմամբ հավաստիության հարցադրությունը պատմությանը ներհատուկ է եղել ի սկզբանե: Արդարև, նախկին կյանքի և երբեմն նաև երկի գրման ժամանակի ներկայում դեռ շարունակական իրադարձությունների, գործերի ու կարգավորության «ի՞նչ», «ինչպիսի՞ ինչ» ու «ինչպե՞ս» գոյությունը՝ պատճառով հանդերձ, քննող և բացահայտող պատմագիտությանը՝ պատմասացությանն ու պատ-

[1] «Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցասէրդ, հայեաց … և զարմացի՛ր«» [8: 17]:

[2] «…Ո՛վ ուսումնասէր դու և յայսոսիկ զմեզ աշխատեցուցանող» [8: 22]:

[3] Նոր ժամանակից ի վեր՝ եվրոպական գիտության համար հիմնադիր այս ըմբռնման՝ Մ. Հայդեգերի և Հ.–Գ. Գադամերի մեկնաբանության մասին տես [15: 198–209], նույնը տես նաև [12: 64–76]:

մաբանությանը, «հավաստիության» խնդիրը և հենց ստույգը, հավաստին պատշաճ կարգով, «ոճով պատմելու» սկզբունքային դիտավորությունը հատուկ է եղել իր սկզբնավորումից ի վեր: Այդ չի նշանակում, իհարկե, որ պատմողական բանավոր ավանդույթում և գրավոր տեքստերում հավաստիի հետ մեկտեղ չի պատմվել, կամա և գուցե նաև ակամա, զուտ առասպելականն ու թյուրը ևս, ինչի մասին իր «Պատմութիւն Հայոց» երկում բազմիցս նշում է Մովսես Խորենացին:

Առաջնորդվելով եղելությունների իսկության բացահայտության ու պատմումի սկզբունքային դիտավորությամբ, պատմություններում, որպես պատմելի, ի մի էր ժողովվում «ստույգը», «հավաստին»: «Եւ սկսայց՝ յորոց և այլքն, որք յեկեղեցւոջ և ոյք ըստ Քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս սկզբանն առասպելս, բայց եթե զկնիսն՝ ժամանակս ինչ արդեօք և զարս յայտնիս, որում և աստուածայինքն ի ճահ գայցեն պատմութիւնք բանից. մինչև ի հարկէ երթեալ հասնիցեմք ի հեթանոսականսն զրուցատրութիւնս. սակայն և նոցանէ՝ զոր ինչ **հաւաստին կարծեմք, առնուլ**» (ընդգծումը՝ Ռ. Ք.) [8: 12]: Մեկ այլ տեղում նշելով, թե որքան դժվարահավաք ու տաժանելի է իր կողմից ձեռնարկած պատմության ստույգ շարադրանքը, որում և՝ ի սկզբանե մինչև իր ներկան՝ եղելությունների ժամանակների գյուտը, Պատմահայրը գրում է. «Զորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք **զհաւաստին** ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենևին անսուտ» [8: 17]: Ասում է նաև՝«**Զհաւաստին** որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանից՝ կարգեցաք…» [8: 22]:

Հարկ է, սակայն, նկատել, որ տարբեր դարաշրջաններում և հեղինակների պատմագիտական հայեցակարգերի զանազանությամբ նաև պայմանավորված՝ պատմության բովանդակ խնդրակարգում տարբերաբար են որոշարկվել, թե ինչը հասկանալ որպես իրադարձությունների՝ իրենց ժամանակային ներկայում «ինչ» և «ինչկերպ» լինելության, պատճառների, նշանակալիության «իսկություն» և թե ինչը հասկանալ որպես «հավաստիության» բուն գաղափար ու չափանիշ: Արդարև, իրադարձությունների ու գործերի՝ «ինչ» ու «ինչպես» եղելության ճշմարիտ ու իրեն ընդունելի հայեցողությունն ու հասկացումն ունի և դրան «հաւատարմացեալ»՝ իր պատմությունն է հյուսում նաև Պատմահայր Մովսես Խորենացին: «Յաղագս Արմատոյն հանուր մարդկութեանս, կամ թէ հաճոյ ումեք թուիցի ասել ծայրին, պարտ էր մեզ սակաւ ինչ անցանել բանիւ, թէ ընդէ՞ր հակառակ Հոգւոյն խորհեալ՝ անմիաբանեցան այլքն ի պատմագրաց, զԲերոսեայ ասեմ, զԲազմավիպէն և զԱբիւդենայ. կամ զնոյն ինքն զՆաւակառուցէն և զայլոց նահապետացն ոչ միայն անուանց և ժամանակաց, այլ և վասն ոչ սկիզբն զառ ի մէնջ **հաւատարմացեալս** կարգելոյ ազգի մարդկան» [ընդգծումը՝ Ռ. Ք., 8: 13]: Համառոտ նշելով, թե ինչպես են այդ պատմագիրները տարապատմում ժամանակների սկզբի մասին՝ անունների ու նաև ժամանակների տարբերությամբ, Պատմահայրն իր բուն պատմությունը շարադրելուց առաջ գրում է. «Արդ օրէն էր մեզ աստանօր զկարծիս նոցա յայտնել ըստ կարողութեան, թե զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհեցան այսպես զայսոսիկ գրել. այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հատցուք աստանօր զբանս, **սկսանելով յաղագս այսորիկ՝ որպես և հաւատացեալ եմք**» [8: 14]:

Կարելի է նկատել, որ այլ է քրիստոնեական միջին դարերի մեր հավատա-

ցյալ պատմիչների ու կոնկրետ Մովսես Խորենացու համար «հավաստին», որն առնչված է հավատի ճշմարտությանը՝ հիմնավորված ու սահմանադրված նրանով, և այլ է ժամանակակից գիտության հավաստին, որն ինչպես և ասվեց, իր ակունքում ունի դեկարտյան ըմբռնումը, իսկ հետագայում կրել է այլ ևս փոփոխություններ: Եվ պատմագիտությունն իր գոյության ընթացքի տարբեր ժամանակաշրջաններում յուրովի ու զանազանորեն է հասկացել ու սահմանել «հավաստին»:

9. Հնարավոր է, իհարկե, ինչպես սովորությունն է ժամանակակից պատմագիտության, **քննությամբ ու կարգով** պատմել իրերի ու գործերի արտաքին փաստական եղելությունն իրենց տեղում ու ժամանակում և այսկերպ՝ կարծես, պատմել հավաստիորեն: Հիրավի, «հավաստիության» այսկերպ ու այսչափ բացորոշ սահմանմամբ նույնպես կարելի է հասկանալ պատմագիտության (կամ պատմության որպես գիտության) անելիք–կատարումն ու կայացումը: Ասվածը կարելի է հասկանալ նաև որպես հնարավոր մի պատասխան «ինչպե՞ս է հնարավոր պատմությունը որպես գիտություն» հարցմանը, եթե հետևելով մշակույթի պատմաբան և հերմենևտիկայի տեսաբան Վ. Դիլթային, գիտության ու մետաֆիզիկայի վերաբերյալ կանտյան հարցադրումը ձևակերպենք արդեն նաև պատմության նկատմամբ[1]: Ավելին՝ այն ոչ միայն հնարավոր մի պատասխան է, այլև հայ ժամանակակից պատմագիտության ոչ լիովին, բայց դեռ առավելապես այդկերպ ու այդչափ կայացածությունն է:

Հարկ է, սակայն, հասկանալ, որ թեկուզ և այդկերպ, այնուամենայնիվ, դեռ միայն մոտավոր և շատ հաճախ թյուր հավաստիությամբ՝ կարելի է պատմել սոսկ **պատմության «մարմինը»**: Այնինչ հնուց մեզ ավանդված պատմություններում և հենց քրիստոնեական տեքստամշակութային ավանդությունում պատմվում է ոչ միայն **պատմության «մարմինը», այլև պատմության «հոգին»**: Դրանցում ուղղությամբ և ոչ «թեք» հասկանալով «հավաստիությունը»՝ պատմվում է պատմության և՛ «մարմինը», և՛ «հոգին»: Այդ պատմություններում իրագործված՝ աստվածային ու մարդկային համայն իրողությունների իսկության ու խորհրդի իմաստախույզ որոնումներում հավաստիությունը հասկացվում է ուղղությամբ և ոչ–այլակերպվածությամբ, որպես **իրենում լրիվություն ու կատարելություն ունեցող <u>Ճշմարտությանը</u> և–կամ աշխարհի ու կյանքի որևիցե իրողության բազմաբովանդակ <u>իսկությանը</u> հասանելու**՝ մարդկային մտա– և ձեռա–կերտ միջոց և ոչ՝ իսկությունը միայն իրենում ու իրենով շրջանակող կամ նույնիսկ փոխարինող մի բան:

Անհրաժեշտ և հենց նախընտրելիորեն պիտոյական է հասկանալ, որ պատմության արժանի «իր»ացյալ և–կամ «գործ»ացյալ ու այդկերպ **մարմնացյալ հոգին** է, որ որպես հենց «հոգի»՝ իրերի ու գործերի իսկություն և պատմելի իմաստ ու իմաստության խորհուրդ, քննությամբ՝ առասպելներում ու ամենայն ավանդապատումներում թաքուցյալ ճշմարտությունը բացորոշելով ու ճշմարիտ խոսքի ոճ կերտումով [հմմտ. 8: 22] ի մի շարակարգյալ՝ արձանացյալ «գիր» ու «պատմություններ», ավանդված է սե-

[1] Վ. Դիլթայի հերմենևտիկայի հայեցակարգի, ինչպես նաև փիլիսոփայական հերմենևտիկայի այլ տեսաբանների՝ Ֆր. Շլայերմախերի, Հ.–Գ. Գադամերի և Պ. Ռիկյորի, այլև ավանդական հերմենևտիկայի՝ անտիկ, միջնադարյան, բողոքական, ռեգիոնալ հայեցակարգերի հասկացման ու մեկնողաբար բացորոշումը մանրամասն իրագործվել է՝ Քոչարյան Ռ., **Բաց հերմենևտիկայի կայացումը** (անտիպ) և ընթացքի մեջ է՝ **«Իսկության հերմենևտիկայի» պատմական եղելումը** (անտիպ) մենագրություններում:

րունդների հասկացման սիրուն՝ ի իմաստացում: **Պատմությունը «հոգի» է՝ խորհուրդ ու իմաստություն, որ պահյալ է ի պատում ու գիր արձանացյալ պատմության «մարմնում»՝ ուսումնասեր մարդկային հոգուն ու կյանքին հղված ի ներկայություն, հասկացմանն ու կատարումին՝ ներկրթություն, իմաստության ու ամենայն առաքինության կատարելություն:**

10. Էական է՝ անհրաժեշտ ու նախընտրելի, հասկանալ ու ամրագրել, որ վերոբերյալ բանաձևմամբ հետազոտական խնդիր, այն է՝«նախկինում պատմված բովանդակության ճշգրտում», պատմագիտությունն իրենում այս կամ այն կերպով ու չափով գիտակցել, ձևակերպել և իրագործել է հնուց ի վեր: Այս խնդիրը պատմագիտության մեջ որպես **սեփական** է հասկացվել՝ ընկալվելով որպես անհրաժեշտ ու բնականոն մի բան: Սա սկզբունքորեն անհրաժեշտ ու նվազագույն այն հենքն է, որի վրա հիմնվածությամբ միայն կարող է գոյություն ունենալ պատմությունը որպես գիտություն, պատմագիտությունը որպես այդպիսին: Սակայն, հարկ է նաև գիտակցել, որ սկզբունքորեն անընդունելի է սոսկ միայն դրանով շրջանակելն ու սահմանափակելը մարդկային բանական հոգուն նախընտրելի և այդ նախընտրելիությամբ հենց պիտոյական այն դիտավորությունը, որին հարկ է, որ նաև ձգտի իմաստացման ձգտող և իր բացության այդպիսի ուղղորդվածություն (ինտենցիոնալություն) իրենում արմատավորել կամեցող պատմագիտությունը: Չէ՞ որ պատմությունները խառնիխուռն մեկտեղ ամբարված սոսկ «հավաստի» տեղեկությունների պարունակություններ չեն:

Հարկ է նկատել, որ քրիստոնեական միջնադարի սուրբ հայրերի տեքստամշակութային ավանդության նշանակալի մաս կազմող «պատմությունների» և այդ թվում՝ նաև Մովսես Խորենացու պատմական երկի նկատմամբ իր հետազոտական խնդիրը, անելիքն ու հենց կատարումը որպես «նախկինում պատմված բովանդակության ճշգրտում» ինքնահասկացող՝ 19–րդ դարի վերջից ի վեր հաստատում գտած վերստուգող և–կամ վերաքննիչ («ռեվիզիոն») մոտեցումը ոչ միայն բավարար չէ, այլև սկզբունքորեն ադեկվատ չէ՝ ամենայն «ընթերցասէրի» և «ուսումնասէրի» ու նաև մեզ հղված այդ պատմություններին՝ այդ ամենում և–կամ այդ ամենով «ասվածի» հասկացման համար: Այդ մոտեցումը կարիք ունի ոչ սոսկ ճշգրտումների, այլև էական վերափոխման:

Շարունակելի …

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 01.11.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիրք Պիտոյից, աշխ. Գ. Մուրադյանի, Եր., 1993:
2. **Ն. Դանիելյան**, Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ի պատմահոգևոր համակարգը և Աստվածաշունչը, Եր., 2011:
3. **Դաւիթ Անյաղթ**, Սահմանք իմաստասիրութեան – Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխ. Ս. Արևշատյանի, Եր., 1980:
4. **Թէովն**, Յաղագս ճարտասանական կրթութեանց, Եր., 1938:
5. **Ա. Թոփչյան**, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., 2001:
6. **Գ. Խուդինյան**, Տարեգիրների ժամանակը [խմբագրական] – «Վեմ» համահայկական հանդես, 2011 թիվ 1 [33] հունվար–մարտ, էջ 3–11:
7. **Ղևոնդ Ալիշան**, Մովսես Խորենացի և իր հայոց պատմությունը – Երկեր, Եր., 1981:
8. **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Եր., 1991:
9. **Ա. Մուշեղյան**, V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ, ատենախոսություն՝ բանասիր. գիտությունների դոկտորի գիտ. աստիճանի հայցման համար, Եր., 1996:
10. **Ա. Մուշեղյան**, Մովսես Խորենացու դարը, Եր., 2007:
11. **Գ. Սարգսյան**, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, Եր., 1965:
12. **Ռ. Քոչարյան**, Հանս–Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր., 2006:
13. **Ռ. Խ. Քոչարյան**, Պատմության մեկնողականությունը և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության իմաստասիրող առանձնահատկությունը, գ. Օշական, 1998թ. կոնֆերանսում կարդացված զեկուցման հոդվածային տարբերակը – «Ռուբիկոն», Եր., 2/10/2006, էջ 4–12:
14. **Ռ. Խ. Քոչարյան**, «Պատմութիւն Հայոց»–ը և պատմության գոյավորության առանձնահատկությունները, գ. Օշական, 1999թ. կոնֆերանսում կարդացված զեկուցման հոդվածային տարբերակը – «Ռուբիկոն», Եր., 2/10/2006, էջ 14–21:
15. **Ռ. Խ. Քոչարյան**, Փիլիսոփայությունը և իսկության խնդիրը, «Բանբեր Երևանի Համալսարանի (հաս. գիտ.)» 1998, հ. 1 (94):
16. **Аристотель**. Поэтика, пер. Гаспарова М. Л. – Сочинения, М., 1984, т. 4., с. 645–680.
17. **Аристотель**. Риторика, Поэтика, пер. и примеч. Цыбенко О. П. [Риторика] и Аппельрот В. Г. [Поетика], М., 2000.
18. **Блок М.** Апология истории, М., 1986.
19. **Гадамер Г. Г.** Человек и язык – От Я к Другому, Минск, 1997, с. 130–142.
20. **Гадамер Г. Г.** История понятий как философия – Актуальность прекрасного, М., 1991, с. 26–43.
21. **Гадамер Х. Г.** Истина и метод. М., 1988.
22. **Гуревич А. Я.** М. Блок и «Апология истории» – М. Блок, Апология истории, М., 1986, с. 182–231.
23. **Тахо–Годи А. А.** Ионийское и аттическое понимание термина “история” и родственных с ним – Тахо–Годи А. А., Лосев А. Ф. Греческая культура в мифах, символах и терминах, СПб., 1999, с. 443–458.
24. **Тахо–Годи А. А.** Эллинистическое понимание термина “история” и родственных с ним – Тахо–Годи А. А., Лосев А. Ф. Греческая культура в мифах, символах и терминах. СПб., 1999, с. 459–483.
25. **Шпет Г. Г.** История как предмет логики – Историко–философский ежегодник 1988, М., 1988, с. 290–320.
26. **Ricoeur P.**, The hermeneutical function of distanciation – Hermeneutics and the Human Sciences, Cambridge, 1982, p. 131–144.
27. **Ricoeur P.**, The model of the text: meaningful action considered as a text – Hermeneutics and the Human Sciences, Cambridge, 1982, p. 197–221.

ПРОБЛЕМАТИКА ИСТОРИИ В ИСТОРИКО–НАУЧНОЙ КОНЦЕПЦИИ МОВСЕСА ХОРЕНАЦИ

КОЧАРЯН РОМИК

Кандидат философских наук,
ассистент кафедры логики, теоретической и практической философии
Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна

В данной статье герменевтической методологией, интерпретативно–философским анализом раскрывается фундаментальная проблематика в историко–философской концепции Мовсеса Хоренаци. Принципиально и сущностно понять историю – значит понять истину «сказанного» в историческом тексте и понять в нём истинное значение, и затем понять совет мудрости этого значения. Выявлена фундаментальная проблематика истории в труде Мовсеса Хоренаци: «понимание и интерпретативная экспликация значения бытия истины истории как таковой, а также совет мудрости в этом значении». Эта всеохватывающая и полная проблематика состоит из двух тесно сплетённых компонент: понимание и интерпретативная экспликация, прежде всего концепции науки истории и затем мудрости содержания в исторически «сказанном», т. е. в истине бытия истории как таковой, в общем, и истории Армении, в частности, – с точки зрения этой концепции науки истории.

Дата представления статьи: 01.11.2012

PROBLMATICS OF HISTORY IN HISTORICAL–SCIENTIFIC CONCEPTION OF MOSES KHORENATSI

ROMIK KOCHARYAN

PhD in Philosophical Sciences,
Assistant of the Chair of Logic, Theoretical and Practical Philosophy,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

The fundamental problematics in the historical–philosophical conception of Moses Khorenatsi is revealed in this article, using hermeneutical methodology and, as such, by the help of interpretative philosophical analysis. To understand history principally and essentially means to understand the genuine “said” by historical text and to understand truth–denoting–meaning and then to get the advice of wisdom in the meaning. It is revealed the fundamental problematics for the history of Moses Khorenatsi: “understanding and interpretively explicating the meaning of the truth–of–being of history as such, as well as the advice of wisdom in that meaning”. This all–embracing and complete problematics consists of two components: understanding and interpretively explicating, first of all, the conception of history–science and then the wisdom of content in the historically “said”, that of truth–of–being of history as such, in general, and concretely of history of the Armenians – viewed by this conception of history–science.

Article submission date: 01.11.2012